Հաստատված է

03/07/2018թ. ՀՊՄՀ

գիտ. խորհրդի N 4 – Լ

նիստում ՀՊՄՀ ռեկտոր՝

........................................

(ստորագրություն)

# ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

## ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

## ԲԱԿԱԼԱՎՐԻ

## ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ

Կրթական ծրագրի մասնագիրը (ԿԾ), նախատեսված է դիմորդների, ուսանողների, ակադեմիական անձնակազմի, շահեկիրների և գործատուների համար: Այն տրամադրում է ծրագրի հիմնական հատկանիշների համառոտ ամփոփումը՝ իր մեջ ներառելով ուսումնառության նախատեսվող արդյունքները, մանրամասն տեղեկություններ ուսուցման, դասավանդման և գնահատման մեթոդների, ուսումնառության արդյունքների և յուրաքանչյուր մոդուլի բովանդակության մասին, որն ակնկալում է ողջամիտ ուսանողը և որին կարող է հասնել, եթե նա լիարժեքորեն օգտվում է իրեն առաջարկվող և տրամադրվող ուսումնական հնարավորություններից:

# ՍՈՑԻՈԼՈԳԻԱ
# ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| **1.** | Կրթական ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը | Սոցիոլոգիա, 031401.01.6 |
| **2.** | Որակավորումների ազգային շրջանակի մակարդակ | Որակավորումների ազգային շրջանակի 6-րդ մակարդակ |
| **3.** | Շնորհվող որակավորումը | Սոցիոլոգիայի բակալավր |
| **4.** | Կրեդիտների քանակը | 240 (երկուհարյուր քառասուն) |
| **5.** | Բարձրագույն ուսումնական հաստատություն | ՀՊՄՀ |
| **6.** | Կրթական ծրագիրը իրականացնող ֆակուլտետ | Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի |
| **7.** | Կրթական ծրագրի հիմնական սպասարկող ամբիոն(ներ) | Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի |
| **8.** | Կրթական ծրագրի ուսուցման լեզու | Հայերեն |
| **9.** | Կրթական ծրագրի ուսուցման ձևը | Առկա/հեռակա |
| **10.** | Կրթական ծրագիրը հավատար-մագրված/լիցենզավորված է՝ | Լիցենզավորված է ՀՀ ԿԳՆ-ի կողմից |

| **11.** Կրթական ծրագրի ընդունելության չափանիշները (մուտքի պայմաններ) |
|---|
| Ծրագրի դիմորդը պետք է ունենա միջնակարգ, կամ նախնական մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթության վկայական: Ընդունելությունը կատարվում է ըստ ՀՀ կառավարության հաստատած Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի: |

**12.** Կրթական ծրագրի կառուցվածքը և նկարագիրը

Բակալավրի ծրագիրը բաղկացած է 5 հիմնական կրթամասերից՝ ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական (առկա՝ 42, հեռակա՝ 38 կրեդիտ աշխատածավալով), ընդհանուր բնագիտական և մաթեմատիկական (առկա և հեռակա 15 կրեդիտ աշխատածավալով), մանկավարժական և հոգեբանական (առկա և հեռակա 27 կրեդիտ աշխատածավալով), ընդհանուր և հատուկ մասնագիտական (առկա և հեռակա 126 կրեդիտ աշխատածավալով), ինչպես նաև այլ կրթական մոդուլներ (առկա՝ 30, հեռակա՝ 34 կրեդիտ աշխատածավալով):

*1.* Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս (առկա՝ 42, հեռակա՝ 38 կրեդիտ)

Պարտադիր դասընթացներ (առկա՝ 38, հեռակա՝ 34 կրեդիտ)

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ դասընթացներ (առկա՝ 6, հեռակա՝ 5 մոդուլ), որոնք նպատակաուղղված են համալսարանական կրթության ընդհանուր տեսական հենքի ձևավորմանը:

Կամընտրական դասընթացներ (առկա և հեռակա 4 կրեդիտ)

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ ուսանողի կողմից ընտրելու հնարավորությամբ դասընթացներ (առկա և հեռակա 2 մոդուլ):

**2.** Ընդհանուր բնագիտական և մաթեմատիկական կրթամաս (առկա և հեռակա **15** կրեդիտ)

Պարտադիր դասընթացներ (առկա և հեռակա 15 կրեդիտ)

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ դասընթացներ (առկա և հեռակա 6 մոդուլ), որոնք նպատակաուղղված են ընդհանուր բնագիտական և մաթեմատիկական գիտելիքների մասնագիտական հենքի ձևավորմանը:

**3.** Մանկավարժական և հոգեբանական կրթամաս (առկա և հեռակա **27** կրեդիտ)

Պարտադիր դասընթացներ (առկա և հեռակա 25 կրեդիտ)

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ դասընթացներ (առկա և հեռակա 8 մոդուլ), որոնք նպատակաուղղված են ընդհանուր մանկավարժական և հոգեբանական գիտելիքների մասնագիտական հենքի ձևավորմանը:

Կամընտրական դասընթացներ (առկա և հեռակա 2 կրեդիտ)

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ ուսանողի կողմից ընտրելու հնարավորությամբ դասընթացներ (առկա և հեռակա 1 մոդուլ):

**4.** Ընդհանուր և հատուկ մասնագիտական կրթամաս (առկա և հեռակա **126** կրեդիտ)

Ապահովում են մասնագիտական ոլորտի հիմնախնդիրների պատշաճ ընկալումը:

Պարտադիր դասընթացներ (առկա և հեռակա 117 կրեդիտ)

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ մասնագիտական պարտադիր դասընթացներ (առկա և հեռակա 29 մոդուլ):

Կամընտրական դասընթացներ (առկա և հեռակա 9 կրեդիտ)

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ ուսանողի կողմից ընտրելու հնարավորությամբ կամընտրական մասնագիտական դասընթացներ (առկա և հեռակա 3 մոդուլ):

**5.** Կրթական այլ մոդուլներ (առկա՝ **30**, հեռակա՝ **34** կրեդիտ)

Կուրսային աշխատանք (առկա և հեռակա 4 կրեդիտ)

Ծրագրի այս հատվածում նախատեսվում է 2-ական կրեդիտ աշխատածավալով 2 կուրսային աշխատանքի կատարում:

Ուսումնական պրակտիկա (առկա և հեռակա 18 կրեդիտ)

Առկա - ներառում է 3-ական կրեդիտ աշխատածավալով 2 ուսումնական պրակտիկա՝ շաբաթը մեկ անգամ, և 6-ական կրեդիտ աշխատածավալով 2 ուսումնական պրակտիկա՝ 6 շաբաթ անընդմեջ տևողությամբ:

Հեռակա - ներառում է 6-ական կրեդիտ աշխատածավալով 3 ուսումնական պրակտիկա՝ 4 շաբաթ անընդմեջ տևողությամբ:

Համարվում է մասնագիտական կրթության կարևոր բաղկացուցիչ մաս, որը հնարավորություն է տալիս անմիջական կապ ստեղծել ուսանողի տեսական գիտելիքների և նրա ապագա մասնագիտական գործունեության միջև:

Ամփոփիչ ատեստավորման նախապատրաստում (առկա՝ 2, հեռակա՝ 4 կրեդիտ)

Կրթական ծրագրի բաղկացուցիչ մաս է, որը հնարավորություն է տալիս պատրաստվել ամփոփիչ ատեստավորման պատշաճության:

Ամփոփիչ ատեստավորում (առկա՝ 6, հեռակա՝ 8 կրեդիտ)

Կրթական ծրագրի եզրափակիչ փուլն է, որի նպատակն է տեսական և գործնական մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգումը ըստ կրթական ծրագրի վերջնարդյունքների:

## **13.** Ծրագրի նպատակները

Ծրագրի նպատակն է.

- Պատրաստել բակալավրի աստիճանում սոցիոլոգ մասնագիտությամբ մասնագետներ, որոնք կունենան հասարակությունը սոցիալական իրականությունը ուսումնասիրող պատմական, փիլիսոփայական, հոգեբանական, մանկավարժական սոցիոլոգիական գիտելիքներ
- Սոցիոլոգիական հետազոտությունների ծրագրավորման մոդելավորման և իրականացման քանակական, որականչափանիշների և մեթոդների մասին գիտելիքներ
- Սոցիալական իրողությունների մեկնաբանման և փոփոխման սոցիոլոգիական մեթոդաբանության կիրառումն ապահովող գիտելիքներ

- Սոցիոլոգիական գործընթացների առաջացման և զարգացման կանխատեսման և վերլուծման ունակություն

| |
|---|
| **14.** Ծրագրի կրթական ելքային արդյունքները |
| Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն |
| Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի՝<br><br>Ա.1.Ճանաչել հասարակության սոցիալական, քաղաքական, տնտեսական, ազգագրական, մանկավարժական,մշակույթային,հոգեբանական, կրթական համակարգերի յուրահատկությունները:<br>Ա.2. Վերլուծել անձի տարիքային հոգեբանական հաղորդակցման սոցիոլոգիական և հոգեբանական տեսությունները, չափանիշները,մեթոդները:<br>Ա.3. Բացահայտել սոցիոլոգիական գիտակարգերի տեսական հիմքերը:<br>Ա.4. Սահմանել սոցիոլոգիական հետազոտության մեթոդոլոգիական հիմքերը;<br>Ա.5. Մեկնաբանել սոցիոլոգիական ինֆորմացիայի հավաքման և վերլուծության հիմնական մեթոդները՝ մաթեմաթիկական, որակական, քանակական :<br>Ա.6 ներկայացնել քաղաքական, սոցիալ-տնտեսական և մարկետինգային գործընթացների ուսումնասիրման հիմնական մոտեցումները: |
| Բ. Գործնական մասնագիտական կարողություններ |
| Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի՝<br><br>Բ1. կիրառելու սոցիոլոգիական հետազոտության նպատակին համապատասխան տվյալների հավաքման և վերլուծության մեթոդներ;<br>Բ2. կիրառելու սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդները արդի սոցիալական,բնապահպանական, մանկավարժական, կրթական խնդիրների ուսումնասիրման համար՝ սոցիալական խմբերի կարիքներն ու շահերը բացահայտելու նպատակով;<br>Բ3. կիրառելու ֆունդամենտալ սոցիոլոգիական, փիլիսոփայական, քաղակական, պատմական, մշակույթային, հոգեբանական գիտելիքները սոցիալական երևույթները և գործընթացները վերլուծելու, մոդելավորելու և ծրագրավորելու համար;<br>Բ4. վերլուծելու սոցիոլոգիական հետազոտության տվյալները վիճակագրական փաթեթի օգնությամբ;<br>Բ5. գնահատելու սոցիոլոգիական ինֆորմացիայի որակը (վալիդությունը և հուսալիությունը);<br>Բ6. ներկայացնելու հետազոտական և վերլուծական աշխատանքների արդյունքները մասնագիտական և զանգվածային լսարանին: |
| Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ |
| Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի՝<br><br>Գ1. հավաքագրել և ընդհանրացնել տեղեկատվություն տարատեսակ աղբյուրներից (գրադարաններ, ինտերնետ ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ), գործածելու համակարգչային ժամանակակից տեխնոլոգիաները տեղեկատվության մշակման նպատակով *(Microsoft Office, Word, Excel, PowerPoint, SPSS);*<br>Գ2. ներկայացնել ուսումնական հետազոտական նախագծերի արդյունքները հաշվետվությունների, զեկուցումների, ռեֆերատների, հրապարակումների տեսքով,մայրենի և օտար լեզուներով, կազմակերպել գիտական բանավեճեր;<br>Գ3. կազմակերպել արդյունավետ շփում և համագործակցություն ինչպես անհատական, այնպես էլ խմբային «կազմակերպությունների» նախագծերում;<br>Գ4. Համադրել տեսական գիտելիքները և գործնական կարողությունները՝ կանխատեսման, վերլուծման, չափման , մոդելավորման, ծրագրավորման: |

| |
|---|
| **15.** Գնահատման մեթոդներ |

«Սոցիոլոգիա» մասնագիտության կրթական ծրագրի շրջանակներում կիրառվող գնահատման մեթոդաբանությունը հիմնվում է ուսանողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների օբյեկտիվության և չափելիության վրա՝ փաստող, ուղղորդող և խրախուսող գործառույթներով: Գնահատվում են ուսանողի՝ ա. գիտելիքը, բ. ունակություններն ու կարողությունները, գ. ինքնուրույնությունը և ակտիվությունը: Ուսանողի անհատական մասնագիտական աճը օբյեկտիվ դիտարկելու նպատակով գնահատման կարգը դիտարկում է նախնական (սկզբնական) վիճակը և վերջնական (ելքային) արդյունքը:

Դասընթացների գնահատման մեթոդներից են՝

1. տեսական դասընթացների պարագայում՝

գրավոր թեստային, ստուգողական աշխատանքներ, միջանկյալ գրավոր և/կամ բանավոր քննություն, ինքնուրույն նախագծեր, հաշվետվություններ, էսսեներ (խոհագրություններ) և բանավոր ու գրավոր ներկայացումներ (պրեզենտացիաներ),

2. գործնական դասընթացների պարագայում՝

գրավոր թեստային, միջանկյալ գրավոր և/կամ բանավոր քննություն, ինքնուրույն նախագծեր, բանավոր հարցումներ, էսսեներ և բանավոր ու գրավոր պրեզենտացիաներ:

Հետազոտական աշխատանքների պարագայում (կուրսային աշխատանք, հաշվետվություն, ավարտական աշխատանք)՝ գնահատումն իրականացվում է առանձին՝ հանձնաժողովի կողմից՝ նախապես սահմանված գնահատման կարգի համաձայն:

Գնահատման ընթացքում կիրառվում է թվային, տառային և վարկանիշային գնահատում (100 միավոր), համաձայն յուրաքանչյուր առարկայի գնահատման համար ընտրված բաղադրիչների:

Գնատման մանրամասները տես ՀՊՄՀ ուսանողների գիտելիքների գնահատման կարգում (https://aspu.am/):

## 16. Ուսուցման և դասավանդման մոտեցումներ

Ուսուցումն իրականացվում է խմբային և հոսքային ձևաչափերով, իսկ սեմինար, գործնական, հետազոտական աշխատանքները և պրակտիկան ներառել են ձևավորված փոքրաթիվ խմբեր: Դասավանդման մեթոդները խրախուսում են ուսանողակենտրոն մոտեցում ուսուցման բոլոր փուլերում՝ խրախուսելով ուսանողի անհատական զարգացումը, մասնագիտական կարողությունների համաչափ աճը, մասնագիտական տեղեկատվության ձեռքբերման հարցում վերջինիս ինքնուրույնությունը, ինչպես նաև անհատական վերլուծական ունակությունները և քննադատական մտածողությունը: Ուսուցման և դասավանդման մոտեցումներն ապահովում են գիտելիքների աստիճանական ավանդում՝ ըստ բարդության, ինչպես նաև հմտությունների և կարողությունների անընդմեջ զարգացում՝ ըստ մասնագիտական կայացման հիմնական պահանջների:

Դասավանդումն իր մեջ ներառում է դասախոսություններ, սեմինարներ, գործնական (անհատական) պարապմունքներ, խորհրդատվություն և գործնական դասընթացներ:

<u>Դասախոսություններ</u> – ընդլայնված և համահունչ փաստերի հաջորդականության ներկայացման հնարավորություն:

<u>Սեմինարներ</u> – խմբային և անհատական, ստեղծագործականի, քննարկումների և անդրադարձի թողարկում, քննադատական մտածողության զարգացում:

<u>Գործնական պարապմունքներ</u> – փորձարարության և թեմայի, փաստաթղթերի և նյութերի վերլուծության և քննարկման հնարավորություն:

<u>Աջակցվող ինքնուրույն ուսում՝ ընթացիկ նյութերի օգտագործմամբ</u> – անհատական հետազոտության և զարգացման աջակցում:

<u>Անհատական խորհրդատվություն</u> – ինքնուրույն ուսուցման ավելի ընդլայնված, խորը վերլուծության և աջակցության հնարավորության տրամադրում:

## 17. Ուսումնական պլանի քարտեզը

Տե՛ս կցված հավելված 3:

## 18. Մասնագիտական գործունեության ոլորտներ

«Սոցիոլոգիա» բակալավրի ծրագրի շրջանավարտները հնարավորություն կունենան աշխատելու որպես սոցիոլոգ:
Շրջանավարտները կարող են աշխատել սոցիոլոգիական և մարկեթինգային հետազոտությունների կենտրոններում և տարբեր կառույցներում (ըստ պահանջի):

## 19. Կրթական չափորոշիչները կամ ծրագրային կողմնորոշիչները, որոնք օգտագործվել են ծրագիրը մշակելիս

- ՀՀ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին օրենքի պահանջները:
- Բարձրագույն կրթության պետական կրթական չափորոշիչները:
- Հարատև ուսումնառության որակավորումների եվրոպական շրջանակը:
- Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի որակավորումների շրջանակը (դուբլինյան նկարագրիչները):
- ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի 6-րդ մակարդակի նկարագրիչները:
- ՀՀ-ում մասնագիտության կրթական ծրագրերի հավատարմագրման չափանիշները և չափորոշիչները:
- Արտասահմանյան առաջավոր համալսարանների համանման կրթական ծրագրերը:

## 20. <<Սոցիոլոգիա>> ԲԿԾ-ի շրջանակներում դասախոսական կազմի որակավորմանը և մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները

Դասավանդողները պետք է՝
Ա/ ունենան որակավորում, որը համապատասխանում է ՄԿԾ ելքային արդյունքներին,
Բ/ տիրապետեն կրթական ծրագրի մաս կազմող այլ դասընթացներին,
Գ/ ունենան մանկավարժական որակներ:

## 21. Հետագա ուսման հնարավորությունները

Ազգային որակավորումների շրջանակով սահմանված 7-րդ (մագիստրոսի) մակարդակ:

## 22. Լրացուցիչ տեղեկատվություն ծրագրի վերաբերյալ

Ծրագրի շրջանակում շրջանավարտը ձեռք է բերում բավարար գիտելիքներ սոցիալական հոգեբանությունից և կարող է կրթությունը շարունակել նաև «Սոցիալական և քաղաքական հոգեբանություն» մասնագիտությամբ մագիստրատուրայում:

Հավելված **1**

| <<ՍՈՑԻՈԼՈԳԻԱ>> ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ ԿԻՐԱՌՎՈՂ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ/ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ | | | |
|---|---|---|---|
| **N** | ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ և ԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ | ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ/ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ |
| Ա.1 | Ճանաչել հասարակության սոցիալական, քաղաքական, տնտեսական, ազգագրական, մանկավարժական,մշակութային,հոգեբանական, կրթական համակարգերի յուրահատկությունները։<br>: | • դասախոսություն<br>• սեմինար<br>• անհատական և խմբային առաջադրանքներ<br>• սահիկահանդես «պրեզենտացիա»<br>• բացատրություն<br>• որակական և քանակական գործիքների մշակում<br>• Բանավեճ | • ընթացիկ առաջադրանքների ստուգումներ<br>• թեստային առաջադրանք<br>• գրավոր և բանավոր ստուգումներ<br>• կուրսային և ավարտական աշխատանքի պաշտպանություն<br>• ռեֆերատ/էսսե |
| Ա.2 | Վերլուծել անձի տարիքային հոգեբանական հաղորդակցման սոցիոլոգիական և հոգեբանական տեսությունները, չափանիշները,մեթոդները։ | • դասախոսություն<br>• սեմինար<br>• անհատական և խմբային առաջադրանքներ<br>• բանավեճ<br>• սահիկահանդես «պրեզենտացիա»<br>• բացատրություն<br>• որակական և քանակական գործիքների մշակում | • ընթացիկ առաջադրանքների ստուգումներ<br>• թեստային առաջադրանք<br>• գրավոր և բանավոր ստուգումներ<br>• կուրսային և ավարտական աշխատանքի պաշտպանություն<br>• ռեֆերատ/էսսե |
| Ա.3 | Բացահայտել սոցիոլոգիական գիտակարգերի տեսական հիմքերը։ | • դասախոսություն<br>• սեմինար<br>• անհատական և խմբային առաջադրանքներ | • ընթացիկ առաջադրանքների ստուգումներ<br>• թեստային առաջադրանք<br>• գրավոր և բանավոր ստուգումներ<br>• կուրսային և ավարտական աշխատանքի պաշտպանություն<br>• ռեֆերատ/էսսե |
| Ա.4 | Սահմանել սոցիոլոգիական հետազոտության մեթոդոլոգիական հիմքերը; | • դասախոսություն<br>• սեմինար<br>• անհատական և խմբային | • ընթացիկ առաջադրանքների ստուգումներ<br>• թեստային առաջադրանք |

| | | | |
|---|---|---|---|
| | | առաջադրանքներ<br>• սահիկահանդես «պրեզենտացիա»<br>• բացատրություն<br>• որակական և քանակական գործիքների մշակում<br>• | • գրավոր և բանավոր ստուգումներ<br>• ցուցադրություններ, նախագծերի արդյունքների մասին զեկուցումներ<br>• կուրսային և ավարտական աշխատանքի պաշտպանություն<br>• ռեֆերատ/էսսե |
| Ա5 | Մեկնաբանել սոցիոլոգիական ինֆորմացիայի հավաքման և վերլուծության հիմնական մեթոդները՝ մաթեմաթիկական, որակական, քանակական: | • դասախոսություն<br>• սեմինար<br>• անհատական և խմբային առաջադրանքներ<br>• սահիկահանդես «պրեզենտացիա»<br>• բացատրություն<br>• որակական և քանակական գործիքների մշակում<br>• | • ընթացիկ առաջադրանքների ստուգումներ<br>• թեստային առաջադրանք<br>• գրավոր և բանավոր ստուգումներ<br>• ցուցադրություններ, նախագծերի արդյունքների մասին զեկուցումներ<br>• հետազոտական աշխատանքի կիրառական մասի իրականացման գնահատում<br>• քննատոմսերում կիրառական առաջադրանքների ներառում<br>• կուրսային և ավարտական աշխատանքի պաշտպանություն<br>• ռեֆերատ/էսսե |
| Ա6 | Ներկայացնել քաղաքական, սոցիալ-տնտեսական և մարկետինգային գործընթացների ուսումնասիրման հիմնական մոտեցումները: | • դասախոսություն<br>• սեմինար<br>• անհատական և խմբային առաջադրանքներ<br>• սահիկահանդես «պրեզենտացիա»<br>• բացատրություն<br>• որակական և քանակական գործիքների մշակում<br>• բանավեճ | • ընթացիկ առաջադրանքների ստուգումներ<br>• թեստային առաջադրանք<br>• գրավոր և բանավոր ստուգումներ<br>• ցուցադրություններ, նախագծերի արդյունքների մասին զեկուցումներ<br>• հետազոտական աշխատանքի կիրառական մասի իրականացման գնահատում<br>• քննատոմսերում կիրառական առաջադրանքների ներառում<br>• կուրսային և ավարտական աշխատանքի պաշտպանություն<br>• ռեֆերատ/էսսե |
| **N** | ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ/ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ |

| | | | |
|---|---|---|---|
| Բ1 | կիրառելու սոցիոլոգիական հետազոտության նպատակին համապատասխան տվյալների հավաքման և վերլուծության մեթոդներ;: | • դասախոսություն<br>• սեմինար<br>• գործնական պարապմունք<br><br>• անհատական և խմբային առաջադրանքներ<br>• ուսումնական պրակտիկա<br>• սահիկահանդես «պրեզենտացիա»<br>• բացատրություն<br>• որակական և քանակական գործիքների մշակում<br>• բանավեճ | • ընթացիկ առաջադրանքների ստուգումներ<br>• թեստային առաջադրանք<br>• գրավոր և բանավոր քննություններ<br>• ցուցադրություններ, նախագծերի արդյունքների մասին զեկուցումներ<br>• կուրսային և ավարտական աշխատանքի պաշտպանություն<br>• ռեֆերատ/էսսե |
| Բ2 | կիրառելու սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդները արդի սոցիալական,բնապահպանական, մանկավարժական, կրթական խնդիրների ուսումնասիրման համար՝ սոցիալական խմբերի կարիքներն ու շահերը բացահայտելու նպատակով; | • դասախոսություն<br>• սեմինար<br>• գործնական պարապմունք<br>• անհատական և խմբային առաջադրանքներ<br>• ուսումնական պրակտիկա<br>• սահիկահանդես «պրեզենտացիա»<br>• բացատրություն<br>• որակական և քանակական գործիքների մշակում<br>• բանավեճ | • ընթացիկ առաջադրանքների ստուգումներ<br>• թեստային առաջադրանք<br>• գրավոր և բանավոր քննություններ<br>• ցուցադրություններ, նախագծերի արդյունքների մասին զեկուցումներ<br>• կուրսային և ավարտական աշխատանքի պաշտպանություն<br>• ռեֆերատ/էսսե |
| Բ3 | կիրառելու ֆունդամենտալ սոցիոլոգիական, փիլիսոփայական, քաղաքական, պատմական, մշակութային, հոգեբանական գիտելիքները սոցիալական երևույթները և գործընթացները վերլուծելու, մոդելավորելու և ծրագրավորելու համար; | • դասախոսություն<br>• սեմինար<br>• գործնական պարապմունք<br>• անհատական և խմբային առաջադրանքներ<br>• ուսումնական պրակտիկա<br>• սահիկահանդես «պրեզենտացիա»<br>• բացատրություն<br>• որակական և քանակական գործիքների մշակում<br>• բանավեճ | • ընթացիկ առաջադրանքների ստուգումներ<br>• թեստային առաջադրանք<br>• գրավոր և բանավոր քննություններ<br>• ցուցադրություններ, նախագծերի արդյունքների մասին զեկուցումներ<br>• կուրսային և ավարտական աշխատանքի պաշտպանություն<br>• ռեֆերատ/էսսե |
| Բ4 | վերլուծելու սոցիոլոգիական հետազոտության տվյալները վիճակագրական փաթեթի օգնությամբ; | • դասախոսություն<br>• սեմինար<br>• գործնական պարապմունք | • ընթացիկ առաջադրանքների ստուգումներ<br>• թեստային առաջադրանք<br>• գրավոր և բանավոր |

| | | | |
|---|---|---|---|
| | | • անհատական և խմբային առաջադրանքներ<br>• ուսումնական պրակտիկա<br>• սահիկահանդես «պրեզենտացիա»<br>• բացատրություն<br>• որակական և քանակական գործիքների մշակում<br>• բանավեճ | քննություններ<br>• հետազոտական աշխատանքի կիրառական մասի իրականացման գնահատում<br>• կուրսային և ավարտական աշխատանքի պաշտպանություն<br>• ռեֆերատ/էսսե |
| Բ5 | գնահատելու սոցիոլոգիական ինֆորմացիայի որակը (վալիդությունը և հուսալիությունը); | • դասախոսություն<br>• սեմինար<br>• սահիկահանդես «պրեզենտացիա»<br>• բացատրություն<br>• որակական և քանակական գործիքների մշակում<br>• բանավեճ<br>• գործնական պարապմունք<br>• անհատական և խմբային առաջադրանքներ<br>• ուսումնական պրակտիկա | • ընթացիկ առաջադրանքների ստուգումներ<br>• թեստային առաջադրանք<br>• գրավոր և բանավոր քննություններ<br>• հետազոտական աշխատանքի կիրառական մասի իրականացման գնահատում<br>կուրսային և ավարտական աշխատանքի պաշտպանություն |
| Բ6 | ներկայացնելու հետազոտական և վերլուծական աշխատանքների արդյունքները մասնագիտական և զանգվածային լսարանին: | • դասախոսություն<br>• սեմինար<br>• գործնական պարապմունք<br>• անհատական և խմբային առաջադրանքներ<br>• ուսումնական պրակտիկա<br>• սահիկահանդես «պրեզենտացիա»<br>• բացատրություն<br>• որակական և քանակական գործիքների մշակում<br>• բանավեճ | • ընթացիկ առաջադրանքների ստուգումներ<br>• թեստային առաջադրանք<br>• գրավոր և բանավոր քննություններ<br>• հետազոտական աշխատանքի կիրառական մասի իրականացման գնահատում<br>• կուրսային և ավարտական աշխատանքի պաշտպանություն<br>• ռեֆերատ/էսսե |
| **N** | **ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ (ՓՈԽԱՆՑԵԼԻ) ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | **ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ/ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ** | **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ** |
| Գ1 | հավաքագրել և ընդհանրացնել տեղեկատվություն տարատեսակ աղբյուրներից (գրադարաններ, ինտերնետ ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ), | • բանավոր ներկայացումներ<br>• գործնական պարապմունք<br>• անհատական և խմբային առաջադրանքներ | • առաջադրանքների ստուգումներ<br>• կուրսային և ավարտական աշխատանքի պաշտպանություն<br>• ռեֆերատ/էսսե |

| | | | |
|---|---|---|---|
| | գործածելու համակարգչային ժամանակակից տեխնոլոգիաները տեղեկատվության մշակման նպատակով *(Microsoft Office, Word, Excel, PowerPoint, SPSS);* | | |
| Գ2 | ներկայացնել ուսումնական հետազոտական նախագծերի արդյունքները հաշվետվությունների, զեկուցումների, ռեֆերատների, հրապարակումների տեսքով,մայրենի և օտար լեզուներով, կազմակերպել գիտական բանավեճեր; | • բանավոր ներկայացումներ<br>• գործնական պարապմունք<br>• անհատական և խմբային առաջադրանքներ | • առաջադրանքների ստուգումներ<br>• կուրսային և ավարտական աշխատանքի պաշտպանություն<br>• ռեֆերատ/էսսե |
| Գ3 | կազմակերպել արդյունավետ շփում և համագործակցություն ինչպես անհատական, այնպես էլ խմբային «կազմակերպությունների» նախագծերում; | • բանավոր ներկայացումներ<br>• գործնական պարապմունք<br>• անհատական և խմբային առաջադրանքներ | • առաջադրանքների ստուգումներ<br>• կուրսային և ավարտական աշխատանքի պաշտպանություն |
| Գ4 | Համադրել տեսական գիտելիքները և գործնական կարողությունները՝ կանխատեսման, վերլուծման, չափման , մոդելավորման, ծրագրավորման: | • բանավոր ներկայացումներ<br>• գործնական պարապմունք<br>• անհատական և խմբային առաջադրանքներ | • առաջադրանքների ստուգումներ<br>• կուրսային և ավարտական աշխատանքի պաշտպանություն<br>• ռեֆերատ/էսսե |

Հավելված **2**

| <<ՍՈՑԻՈԼՈԳԻԱ>> ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՆ | | ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔ | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Դասընթացի անվանումը | | Գիտելիք և իմացություն | | | | | | Գործնական մասնագիտական | | | | | | Ընդհանրական (փոխանցելի) | | | |
| | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 1 | 2 | 3 | 4 |
| 1. | Հայոց լեզու և գրականություն | + | | + | | | | | | | | | | + | + | + | + |
| 2. | Հայոց պատմություն | + | | + | | | | + | | + | + | | | + | + | + | + |
| 3. | Օտար լեզու | + | | + | | | | | | | + | | | + | + | + | + |
| 4. | Մասնագիտական դասընթաց օտար լեզվով | + | | + | | | | | | | + | | | + | + | + | + |
| 5. | Փիլիսոփայություն | + | | + | | | | | | | + | | | + | + | + | + |
| 6. | Ֆիզիկական դաստիարակություն | | | | | | + | | | | | | | | | + | |
| 7. | Ընտրովի դասընթաց 1 ՀՍՏ-ից | | | | | | | | | | | | | | | | |
| 8. | Ընտրովի դասընթաց 2 ՀՍՏ-ից | | | | | | | | | | | | | | | | |
| 9. | Առաջին բուժօգնություն և երեխաների առողջության պահպանման հիմունքներ | | + | | | | + | | + | | + | | | + | + | + | + |
| 10. | Բարձրագույն մաթեմատիկա | | + | + | | | + | | + | | + | | | + | + | + | + |
| 11. | ՏՀՏ հենքային դասընթաց | + | | | | | + | | + | | + | + | | + | + | + | + |
| 12. | Բնապահպանություն և շրջակա միջավայրի խնդիրներ | + | | | | | + | | + | | | + | | + | + | + | + |
| 13. | Հավանականությունների տեսություն և մաթեմատիկական վիճակագրություն | | | | | + | | | | | + | + | | + | + | + | + |
| 14. | Արտակարգ իրավիճակներ և քաղաքացիական պաշտպանություն | + | + | | | | + | | + | | | | | + | + | + | + |
| 15. | Մանկավարժություն | + | + | | + | | | | | + | | | | + | + | + | + |
| 16. | Ընդհանուր հոգեբանություն | + | + | | | | | | + | | | | + | + | + | + | + |

| | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 17. | Տարիքային և մանկավարժական հոգեբանություն | + | + | | | | | | + | | | | + | + | + | + | + |
| 18. | Սոցիալական մանկավարժության | + | + | | | | | | + | | | | + | + | + | + | + |
| 19. | Ընտանիքի հոգեբանություն | + | + | | | | | | + | | | | + | + | + | + | + |
| 20. | Ներառական կրթություն | + | | | | | | | + | | | | + | + | + | + | + |
| 21. | Հոգեբանական հետազոտությունների մեթոդ և մեթոդոլոգիա | + | + | | | | | | + | | | | + | + | + | + | + |
| 22. | Շեղվող վարքի հոգեբանություն | + | | | | | | | + | | | | + | + | + | + | + |
| 23. | Ընտրովի դասընթաց ՄՀ-ից | | | | | | | | | | | | | | | | |
| 24. | Ընդհանուր սոցիոլոգիա | + | + | + | + | + | + | + | + | + | | + | + | + | + | + | + |
| 25. | Սոցիոլոգիայի պատմություն | + | + | + | | | + | | | + | | | | + | + | + | + |
| 26. | Կրթության սոցիոլոգիա | + | + | + | | | + | + | + | + | | | + | + | + | + | + |
| 27. | Սոցիոլոգիական տեսություններ | + | + | + | | | + | | | + | | | + | + | + | + | + |
| 28. | Ժողովրդագրություն և սոցիալական վիճակագրություն | + | | + | | | + | + | + | + | + | | + | + | + | + | + |
| 29. | Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդիկա և տեխնիկա | + | | | + | + | + | + | + | + | | + | + | + | + | + | + |
| 30. | Սոցիալական հոգեբանություն | + | + | + | | | | | + | | + | | | + | + | + | + |
| 31. | Քանակական մեթոդները սոցիոլոգիայում | + | + | | + | + | + | + | + | + | | + | + | + | + | + | + |
| 32. | Սոցիալական փիլիսոփայություն | + | | + | | | | | | + | | | | + | + | + | + |
| 33. | Պատմական սոցիոլոգիա | + | + | + | | | + | + | + | + | | | + | + | + | + | + |
| 34. | Սոցիոլոգիական հետազոտությունների համակարգչային ապահովում | + | | | | | + | + | + | + | + | + | + | + | + | + | + |
| 35. | Մոդելավորումը և ծրագրավորումը սոցիոլոգիայում | + | | | | | + | + | + | + | | | + | + | + | + | + |
| 36. | Հաղորդակցության սոցիոլոգիա | + | + | + | | | + | + | + | + | | | + | + | + | + | + |
| 37. | Կոնֆլիկտի սոցիոլոգիա | + | + | + | | | + | + | + | + | | | + | + | + | + | + |
| 38.. | Սոցիալական մոբիլություն | + | + | + | | | + | + | + | + | | | + | + | + | + | + |
| 39. | Սոցիոլոգիական մտքի պատմություն | + | + | | | | + | + | + | + | | | + | + | + | + | + |

| | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 40. | Տնտեսական սոցիոլոգիա | + | + | + | | | + | + | + | + | | | + | + | + | + | + |
| 41. | Անձի սոցիոլոգիա | + | + | + | | | + | + | + | + | | | + | + | + | + | + |
| 42. | Որակական մերոդները սոցիոլոգիայում | + | + | | + | + | + | + | + | + | | + | + | + | + | + | + |
| 43. | Մշակույթի սոցիոլոգիա | + | + | + | | | + | + | + | + | | | + | + | + | + | + |
| 44. | Ազգագրություն և էթնոսոցիոլոգիա | + | + | + | | | + | + | + | + | | | + | + | + | + | + |
| 45. | Չափման տեսություններ և ընտրանք | + | + | | + | + | + | + | + | + | | + | + | + | + | + | + |
| 46. | Կազմակերպությունների սոցիոլոգիա | + | + | + | | | + | + | + | + | | | + | + | + | + | + |
| 47. | Մարկեթինգային հետազոտություն | + | + | | + | + | + | + | + | + | | + | + | + | + | + | + |
| 48. | Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները սոցիոլոգիայում | + | + | | | | | + | + | | | | + | + | + | + | + |
| 49. | Սոցիոլոգիական ուսումնասիրությունների հոգեբանական չափանիշները | + | + | | + | | | | + | + | | | + | + | + | + | + |
| 50. | Արդի հասարակական հիմնահարցերը սոցիոլոգիայում | + | + | + | | | + | + | + | + | | | + | + | + | + | + |
| 51. | Սոցիալական կանխատեսումներ և նախագծեր | + | + | + | | | + | + | + | + | + | | + | + | + | + | + |
| 52. | Քաղաքական սոցիոլոգիա | + | + | + | | | + | + | + | + | | | + | + | + | + | + |
| 53. | Ընտրովի դասընթաց 1 մասնագիտական | | | | | | | | | | | | | | | | |
| 54. | Ընտրովի դասընթաց 2 մասնագիտական | | | | | | | | | | | | | | | | |
| 55. | Ընտրովի դասընթաց 3 մասնագիտական | | | | | | | | | | | | | | | | |
| Կուրսային աշխատանք | | | | | | | | | | | | | | | | | |
| Ուսումնական պրակտիկա | | | | | | | | | | | | | | | | | |
| Ամփոփիչ ատեստավորման նախապատրաստում | | | | | | | | | | | | | | | | | |
| Ամփոփիչ ատեստավորում | | | | | | | | | | | | | | | | | |

Հավելված **3**

| <<Սոցիոլոգիա>> բակալավրի կրթական ծրագրի ուսումնական պլանը |
| --- |
| ԲԿԾ առկա<br>ԲԿԾ հեռակա |

Հաստատված է Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի խորհրդի
**06/07/2018** թ. թիվ **10** նիստում
Դեկան՝ ________________________ Ռ. Պետրոսյան